ԿԱՐԾԻՔ

Նանե Գառնիկի Սահակյանի՝ «Պետական գնումների իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ «ԺԲ.00.03 – Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Նանե Գառնիկի Սահակյանի՝ «Պետական գնումների իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ պետական գնումներն իրականացվում են պետական բյուջեի միջոցներով, այսինքն՝ հարկատուների հաշվին: Պետական գնումների միջոցով ապահովվում են հանրային շահերը: Հետևաբար, տրամաբանական է, որ պետական գնումների ոլորտը միշտ գտնվում է ուշադրության կենտրոնում: Այդուհանդերձ, ուշադրության կենտրոնում գտնվելը չի բացառում ոլորտում առկա խնդիրները, որոնց լուծումը համակարգային գիտական հետազոտություն է պահանջում:

Պետական գնումների ոլորտը նախ և առաջ խնդրահարույց է այն իմաստով, որ այստեղ սերտորեն փոխկապակցված են հանրային իրավունքը (մասնավորապես՝ վարչական իրավունքը) և մասնավոր իրավունքը, ուստի անհրաժեշտ է առանձին հարցերը լուծելիս հստակ տարանջատել, թե որ իրավունքն է գերակայում տվյալ հարաբերության կարգավորման ժամանակ, ինչը գործնականում ոչ միշտ է ապահովվում:

Նանե Սահակյանի թեկնածուական ատենախոսությունն արդիական է այն տեսանկյունից, որ պետական գնումների ոլորտում ծագում են բազմաթիվ օրենսդրական, տեսական, գործնական խնդիրներ, որոնք լուծելու համար անհրաժեշտ է համակողմանի հետազոտել պետական գնումների առանձնահատկությունները: Մինչդեռ ի տարբերություն շատ այլ պետությունների՝ Հայաստանի Հանրապետությունում մինչ այժմ առկա չէ համապարփակ գիտական աշխատություն, որը կհետազոտեր գնումների ոլորտի ինչպես տեսական, այնպես էլ գործնական խնդիրները:

Հետևաբար, կարևորվում է պետական գնումների համակողմանի գիտական ուսումնասիրությունը, օրենսդրական և գործնական խնդիրների բացահայտումը և դրանց լուծման համար մեխանիզմների առաջադրումը, առանց որոնց անհնար է հասնել առկա օրենսդրական և գործնական խնդիրների արդյունավետ լուծմանը:

Թեմայի արդիականությունը պայմանավորվում է նաև գնումների ոլորտի միջազգային իրավական ակտերի իմպլեմենտացիայի անհրաժեշտությամբ: Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերի մասնակից է, որոնցով կարգավորվում են պետական գնումների ոլորտի տարաբնույթ հարցեր: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետությունը նաև միջազգային կարգավորումների հաշվառմամբ է լուծում պետական գնումների ոլորտի խնդիրները: Հետևաբար, անհրաժեշտ է նաև գիտականորեն ուսումնասիրել ներպետական և միջազգային իրավական ակտերի հարաբերակցությունը՝ հնարավոր հակասությունները բացահայտելու և լուծումներ առաջարկելու նպատակով:

Վերոգրյալ հանգամանքների հաշվառմամբ կարող ենք եզրահանգել, որ Նանե Սահակյանի ատենախոսությունը խիստ արդիական է, ունի տեսական և գործնական հետաքրքրություն՝ հաշվի առնելով նաև այն, որ ատենախոսության շրջանակներում առանձնացվել են ինչպես տեսական, այնպես էլ գործնական խնդիրներ, ներկայացվել են դրանց լուծման վերաբերյալ առաջարկներ՝ այդ թվում օրենսդրական փոփոխությունների առաջարկության տեսքով:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Նանե Սահակյանի կատարած հետազոտության օբյեկտ են կազմել պետական գնումների կազմակերպման ընթացքում առաջացող հարաբերությունները՝ մասնավոր իրավունքի համատեքստում, իսկ հետազոտության առարկան՝ պատվերի և պետական գնումների հատկանիշները, պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի բնույթը, պայմանագրի էական պայմանները, գնումների գործընթացի մասնակցի կարգավիճակը, վերջինիս ներկայացվող պահանջները, գնման ընթացակարգերի առանձնահատկությունները, մրցույթների անցկացման կարգը և պայմանագրի կնքման առանձնահատկությունները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսությամբ կատարված հետազոտության նպատակը Հայաստանի Հանրապետությունում պետական գնումների իրավական կարգավորման հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունը և դրանց հետագա կատարելագործմանն ուղղված առաջարկներ ներկայացնելն է: Այդ նպատակի իրագործման համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրների լուծումը՝

1) ուսումնասիրել և վեր հանել պետական պատվերի և պետական գնումների հատկանիշները,

2) վեր հանել պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի բնույթը, վերջինիս հիմնական տարբերակիչ հատկանիշները քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից,

3) բացահայտել պետական գնումների գործընթացի մասնակիցների կարգավիճակը, նրանց շրջանակը, մասնակիցներին ներկայացվող պահանջները,

4) վեր հանել Հայաստանի Հանրապետությունում գործող գնման ընթացակարգերի առանձնահատկությունները, համեմատել այլ պետություններում գործող ընթացակարգերի հետ,

5) հետազոտել մրցույթների անցկացման առանձնահատկությունները,

6) բացահայտել պետական կարիքների բավարարման նպատակով պայմանագրի կնքման կարգը, այդ պայմանագրի էական պայմանները,

7) վեր հանել գնումների գործընթացում առաջացող հիմնական օրենսդրական և գործնական խնդիրները, ներկայացնել և հիմնավորել պետական գնումները կարգավորող օրենսդրության և դրա կիրառման կառուցակարգերի կատարելագործմանն ուղղված առաջարկները:

Հարկ է նշել, որ հեղինակի կողմից հաջողվել է հասնել իր առջև դրված նպատակի և խնդիրների լուծմանը:

Հետազոտության գիտական նորույթը: Նանե Սահակյանի ատենախոսության գիտական նորույթն այն է, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ համապարփակ ուսումնասիրության և վերլուծության են ենթարկվել պետական գնումների գործընթացի հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրները՝ մասնավորապես պետական պատվերի, պետական գնման հասկացությունները, պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի էությունն ու կնքման առանձնահատկությունները, գնումների գործընթացի մասնակցի կարգավիճակը, գնման ընթացակարգերի առանձնահատկությունները և այլն:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում և գիտագործնական բնույթի առաջարկություններում, ինչպես նաև հեղինակի կողմից հրապարակված հոդվածներում:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ պետական գնումների ոլորտն ուսումնասիրվել է համալիր կերպով, վեր են հանվել ոլորտում առկա մի շարք տեսական, օրենսդրական և գործնական խնդիրներ, որով պայմանավորված՝ սույն ատենախոսության եզրահանգումները, ներկայացված գիտական և գործնական առաջարկները կարևոր նշանակություն կարող են ունենալ սույն ոլորտի հետագա ուսումնասիրության, այդ թվում՝ պետական գնումների առանձին հիմնախնդիրների վերաբերյալ գիտական ուսումնասիրությունների և գիտագործնական հարցերի մշակման համար:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ սույն հետազոտությունը կարող է կիրառվել ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության ընթացքում՝ մասնավորապես հիմք հանդիսանալով ինչպես օրենսդրական փոփոխությունների, այնպես էլ գործնական խնդիրների լուծման համար: Բացի այդ՝ սույն ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ուսումնական դասընթացների՝ մասնավորապես «Գործարարական իրավունք» դասընթացի շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ներառված յոթ պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

«Պետական գնումների գործընթացի ընդհանուր բնութագիրը» վերտառությամբ առաջին գլխում հեղինակը վեր է հանել պետական պատվերը և պետական գնումները բնորոշող հատկանիշները՝ ներկայացնելով ինչպես պետական պատվերի (էջ 31), այնպես էլ պետական գնման (էջ 37) նոր բնորոշումներ՝ արձանագրելով, որ գործող հասկացությունները չեն բացահայտում պետական պատվերի և պետական գնման էությունը:

Հեղինակը բավականին մանրամասն անդրադարձել է պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի էությանը՝ անդրադառնալով նաև այս հարցում առկա տեսական բանավեճին: Ողջունելի է, որ հեղինակը բավականին հիմնավորված կերպով ներկայացրել է իր տեսակետը և եզրահանգել, որ նշված պայմանագիրը գործարարական պայմանագիր է՝ ներկայացնելով նաև դրա առանձնահատկությունները (էջեր 56-57):

Հեղինակի կատարված հետազոտությունն արժեքավոր է նաև նրանով, որ ուսումնասիրվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պետական պայմանագրի և դրա հիման վրա կնքվող ապրանքների մատակարարման պայմանագրի կիրառման պրակտիկան: Տարբեր պետական մարմիններին կատարած հարցումների, ինչպես նաև պայմանագրերի, դատական գործերի ուսումնասիրության հիման վրա հեղինակը բացահայտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կարգավորումները՝ երկու պայմանագիր կնքելու վերաբերյալ, չեն կիրառվում՝ որևէ գործնական խնդիր չառաջացնելով: Ուստի հեղինակն առաջարկել է համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (էջեր 59-62):

«Պետական գնումների գործընթացի մասնակիցը» վերտառությամբ երկրորդ գլխում հեղինակը ներկայացրել է գնումների գործընթացի մասնակցի կարգավիճակը՝ ներկայացնելով ինչպես տեսական, այնպես էլ գործնական բնույթի խնդիրներ:

Հեղինակը մի շարք դատական գործերի և պայմանագրերի ուսումասիրության հիման վրա անդրադարձել է օտարերկրացիների, ինչպես նաև գործարարական գործունեություն չիրականացնող սուբյեկտների կողմից գնումներին մասնակցելու առանձնահատկություններին (էջեր 66-71, 76-81):

Նանե Սահակյանը բացահայտել է գնումներին մասնակցելու իրավունքը և գնումներին մասնակցելու համար անհրաժեշտ որակավորման չափանիշները: Հեղինակն անդրադարձել է գնումներին մասնակցելու արգելքներին, այդ թվում՝ գնումներին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառվելու առանձնահատկություններին, ներկայացրել վերջինիս հետ կապված մի շարք գործնական խնդիրներ՝ մասնավորապես կապված հակամրցակցային համաձայնությունները գնումներին մասնակցելու արգելք հանդիսանալու նախկին և ներկա կարգավորումների տարբերությունների հետ (էջեր 87-89):

«Պետական գնումների անցկացման կարգը» վերտառությամբ երրորդ գլխում հետազոտված են Հայաստանի Հանրապետությունում գործող գնման ընթացակարգերի հիմնական բնութագրերը և առկա թերությունները: Հեղինակը ներկայացրել է ինչպես տեսության մեջ ներկայացվող, այնպես էլ տարբեր պետություններում գործող գնման ընթացակարգերի առանձնահատկությունները, բացահայտել Հայաստանի Հանրապետությունում գործող գնման ընթացակարգերի թերությունները: Մասնավորապես հեղինակը մանրամասն ներկայացրել է մեկ անձից գնման ընթացակարգի օրենսդրական և գործնական խնդիրները (էջեր 110-114), էլեկտրոնային եղանակով գնում կատարելու ընթացքում առաջացող խոչընդոտները (էջեր 106-107), գնանշման հարցման հետ կապված օրենսդրական խնդիրները (էջեր 107-109): Աշխատանքն արժեքավոր է նրանով, որ հեղինակը ոչ միայն բացահայտել է առկա խնդիրները, այլ առաջարկել նաև դրանց հաղթահարման օրենսդրական և գործնական լուծումներ:

Հեղինակն աշխատանքում անդրադարձել է նաև գնումների հայտարարության, հրավերի և հայտի բնույթին՝ գնման հայտարարությունը և հրավերը համարելով օֆերտա անելու հրավեր, իսկ հայտը՝ օֆերտա: Հեղինակը դատական գործերի հիման վրա հիմնավորել է, որ նշված հարցն ունի ոչ միայն տեսական, այլ նաև գործնական նշանակություն (էջեր 127-128):

Հեղինակը ներկայացրել է նաև մրցույթի անցկացման ընթացքում առաջացող մի շարք այլ գործնական խնդիրներ և առաջարկել դրանց լուծման մեխանիզմներ, անդրադարձել գնման գործընթացի արդյունքում պայմանագիրը կնքված համարելու պայմաններին:

Հարկ է մատնանշել, որ Նանե Գառնիկի Սահակյանի ատենախոսությունն առանձնանում է իր զգալի ինքնուրույնությամբ, շարադրման հստակությամբ, հեղինակի

եզրահանգումների և ներկայացված առաջարկների գիտականորեն հիմնավորվածությամբ, հավաստիությամբ և արժանահավատությամբ: Հեղինակն իրականացրել է առաջադրված հիմնախնդիրների ամբողջական և համակողմանի վերլուծություն՝ բացահայտելով դրանց առաջացման հիմքերը և առաջարկելով հաղթահարման ուղիներ:

Նանե Սահակյանի կատարած ծավալուն աշխատանքի մասին է վկայում այն, որ հեղինակն ուսումնասիրել է ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա մասնագիտական գրականություն, իրավական ակտեր, մեծ քանակի գործնական նյութեր: Հեղինակն ուսումնասիրել է նաև ներպետական դատարանների և Եվրոպական Միության դատարանի բազմաթիվ դատական ակտեր: Նշված աղբյուրների հիման վրա հեղինակը կատարել է մի շարք կարևոր եզրահանգումներ՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով պետական գնումների ոլորտի բարելավմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է սեղմագրին ներկայացվող պահանջներին: Այն արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները, արդյունքների նորությունը, կիրառական նշանակությունը:

Ատենախոսության թեմայով հեղինակի կողմից հրապարակված հոդվածները ևս արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքներն ու դրույթները և հրապարակված են ՀՀ ԲՈԿ-ի կողմից սահմանված գիտական ամսագրերում և ժողովածուներում:

Այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ ատենախոսության մի քանի մասնագիտական-իրավական բնույթի մոտեցումներ որոշակի տարակարծությունների տեղիք են տալիս կամ լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն, հարկ ենք համարում հեղինակի ուշադրությունը հրավիրել ներքոհիշյալ մի շարք դիտարկումների վրա.

1. Կարևորելով փոքր և միջին գործարարների մասնակցությունը տնտեսական գործունեությանը, այդ թվում՝ պետական գնումների գործընթացին՝ այնուամենայնիվ գտնում ենք, որ բանավիճային է հեղինակի կողմից պաշտպանության ներկայացված դրույթն այն մասին, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով պետք է սահմանել արտոնություն փոքր և միջին գործարարների համար (էջեր 11, 72-76):

Կարծում ենք՝ աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակը ներկայացներ նաև բավարար հիմնավորումներ՝ տնտեսական գործունեության վրա նմանատիպ կարգավորման դրական ու բացասական ազդեցությունների վերաբերյալ՝ հաշվի առնելով, որ որևէ տնտեսվարող սուբյեկտի առավելություն տալն ունի հիմնավորման կարիք նաև տնտեսական գործունեության ազատությանը, ազատ տնտեսական մրցակցությանը չխոչընդոտելու տեսանկյունից:

2. Հեղինակն աշխատանքում անդրադարձել է գնման գործընթացում հաղթողի որոշման չափանիշներին և օրենսդրության ու գործնական խնդիրների վերլուծության արդյունքում եկել այն եզրահանգման, որ գնման գործընթացում հաղթողին որոշելու հիմնական չափանիշը, որպես կանոն, միայն առաջարկվող գինն է: Հեղինակն առաջարկել է հաղթող մասնակցին որոշելու չափանիշ սահմանել ոչ միայն առաջարկվող գինը, այլ առաջարկվող գնի և գնման առարկայի որակական հատկանիշների համակցությունը: Ըստ հեղինակի՝ նման կարգավորումը հնարավորություն կտա պետական կարիքները բավարարել ոչ թե միայն ամենացածր գնով գնման առարկաներով, այլ ամենաարդյունավետ գին և որակ ունեցող գնման առարկաներով (էջեր 13, 130-131):

Նշված դրույթի կապակցությամբ գտնում ենք, որ այն լրացուցիչ հիմնավորման կարիք ունի՝ մասնավորապես բացահայտելու համար, թե ինչու գործող օրենսդրությամբ հնարավոր չէ հասնել վերոգրյալ արդյունքին՝ նկատի ունենալով, որ գնման առարկայի տեխնիկական բնութագրերը սահմանում է պետական պատվիրատուն, և վերջինս կարող է սահմանել որակական բարձր չափանիշներ, ինչը գործնականում թույլ կտա լուծել բարձրացված խնդիրը:

3. Հարկ ենք համարում անդրադառնալ հեղինակի կողմից բարձրացված բանավիճային հարցերից մեկին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելու հարցի կապակցությամբ ծագող վեճերի ընդդատությանը (էջեր 90-91):

Թեև հեղինակի եզրահանգումն այն մասին, որ նշված վեճերը ենթակա են քննության ընդհանուր իրավասության դատարանների կողմից, բխում է գործող օրենսդրության կարգավորումներից, սակայն կարծում ենք, որ խնդրահարույց է նշված վեճերը քաղաքացիաիրավական դիտելը: Հարկ է նշել, որ հեղինակը մանրամասն հիմնավորել է իր եզրահանգումը, սակայն աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակն առավել մանրամասն ներկայացներ այս հարցի կապակցությամբ օտարերկրյա փորձը:

4. Միաժամանակ գտնում ենք, որ աշխատանքն առավել կշահեր, եթե հեղինակն անդրադառնար նաև քաղաքացիաիրավական բնույթի այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ պայմանագրի կատարման, պայմանագրի խախտման դեպքում կողմերի քաղաքացիաիրավական պատասխանատվության, պայմանագրի կատարման ապահովման առանձնահատկությունները:

Այսպիսով, ամփոփելով ատենախոսության վերաբերյալ արձանագրված նկատառումները՝ կարող ենք փաստել, որ դրանք առավելապես բանավիճային են և չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքները: Հեղինակին հաջողվել է

կատարել ավարտուն, հիմնավորված, փաստարկված և գիտական պատշաճ մակարդակի աշխատանք:

Մեր կարծիքով Նանե Գառնիկի Սահակյանի՝ «Պետական գնումների իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին և կարող է գնահատվել որպես իրավագիտության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում: Ուստի Նանե Գառնիկի Սահակյանն արժանի է «ԺԲ.00.03 – Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ» իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
ԻՐԱՎ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ **Վ.Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

03.02.2020թ.

Ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԻՐԱՎ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ **Հ.Մ. ԽԱՉԻԿՅԱՆ**